

# ԼԻՈՆԻ Ս. ՀԱԿՈԲ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՍԱՆԱՄՅԱԿԸ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգևոր բերկրանքի օր էր դեկտեմբերի 18-ը Լիոնի և շրջակայից հայության համար: Այդ օրը անվանակոչության և ուխտի քսանհրոդ տարեդարձն էր Լիոնի Ս. Հակոբ Հայ Սուրբական Մայր Եկեղեցու:

Քսան տարի առաջ էր, 1963 թվականի հունիսին, որ կատարվեց եկեղեցու օծումը՝ ձեռամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

Հայկական դասական ոճով կերտված այդ կոթողը կառուցվել է ժողովրդական հանգանակությամբ և գլխավոր բարերարությամբ տիար Կարապետ Հակոբյանի:

1983 թվականի դեկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Մծբնա Հակոբ Հայրապետի տոնի առիթով, առավոտյան ժամը 10-ին, Ս. Հակոբ Մայր եկեղեցում մատուցվում է հանդիսավոր սուրբ պատարագ, որին ներկա էին հարյուրավոր հայ հավատացյալներ: Օրվա պատարագիչն է հայրապետական պատվիրակի Լիոնի փոխնորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը:

Դպրաց դասի երգեցողությունը կատարում է եկեղեցու «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարությամբ պրն. Հովհաննես Պերպերանի:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազան հայրը հավուր պատշաճի ոգեշնչված քարոզ է խոսում՝ վեր հանելով տոնական օրվա խորհուրդն ու նշանակությունը, միաժամանակ ընդգծելով Եկեղեցու պաշտպան սրբի՝ Մծբնա Հակոբ հայրապետի կատարած պատմական հոգևոր դերը Հայ Եկեղեցու պատմության լույսի ներքո:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն՝ ի հիշատակ շրջանի եկեղեցիներում ծառայած հանգուցյալ հայ հոգևորականների, ազգային բարերարների, ազգային գործիչների ու մշակների:

Այնուհետև կատարվում է մատաղօրհնեքի ավանդական արարողություն, և օրհնված մատաղը բաժանվում ներկա հավատացյալ բազմությանը:

Եկեղեցական սույն արարողություններից հետո եկեղեցուն կից Ազգային Տան սրահում, շրջանի հայ «Տիկնանց միության», «Կապույտ խաչի» և «Կարմիր խաչի» անդամուհիների կողմից կազմակերպվում է ընդունելություն-ճաշկերույթ:

Ճաշկերույթին, Տ. Նորվան եպս. Զաքարյանի նախագահությամբ, ներկա էին Ազգային միության պատվո նախագահ և ազգային բարերար Ճիպրայել Պահատուրյանը, նախագահ Սեպուհ Սարյանը, հոգևոր հովիվներ Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը, Տ. Իսահակ

քին. Հեքիմյանը, շրջանի տարբեր միությունների ներկայացուցիչներ և հրավիրյալներ՝ շուրջ 200 հոգի:

Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցին

Ճաշկերույթի ընթացքում ներկաները հոտընկայս ունկնդրում են Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության և գնահատանքի մի շարք կոնդակները, որոնց համաձայն Տ. Նորվան սրբազանը քահանայական լանջախաչ և հայրապետական սրբատառ կոնդակ է հանձնում եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Իսահակ քհն. Հեքիմյանին, «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան և սրբատառ կոնդակ՝ ազգային գործիչ և եկեղեցու բարերար Մարգար Մարգարյանին և եկեղեցու երկարամյա դպրապետ Հովհաննես Հաբեյանին, ինչպես նաև օրհնության ու գնահատանքի կոնդակներ՝ Վիենի Ազգային Միության փոխատենապետ Մամբրե Ալթունյանին, Սենտ Էտիենի Ազգային Միության պատվո նախագահ Արթին Սարաֆյանին և լիոնահայ ազգային գործիչներ Կարապետ Հովակիմյանին, Պետրոս Գապաքճյանին և Կարապետ Քելեկյանին:

Բոլոր պարգևատրվողներն էլ առանձին-առանձին իրենց շնորհակալության որդիական անկեղծ խոսքն են ուղղում Վեհափառ Հայրապետին՝ իրենց այդ բարձր պատվին արժանացնելու համար և մաղթում, որ իրենց հայրերի Աստվածը տակավին երկար և արևոտ տարիներ պարգևի Նորին Սրբությանը ի պայծառություն Ամենայն Հայոց Սուրբ Աթոռի, Հայ Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն համայն հայ հավատացյալ ժողովրդի:

Ճաշկերույթի ընթացքում հայ դասական ու ժողովրդական մի քանի երգերի կատարմամբ հանդես է գալիս եկեղեցու քսանամյա «Կոմիտաս» երգչախումբը:

Երգերով հանդես են գալիս նաև հյուրաբար Լիոնում գտնվող, Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի շրջանավարտներ՝ կանադահայ երգիչ Դավիթ Վարժապետյանը և երգչուհի Մենտուհի Զոլումյանը: Բանաստեղծ Հովհաննես Շիրազի ստեղծագործություններից հատվածներ է արտասանում Թորոս Սպիղանյանը:

Ընդունելության վերջում շնորհավորանքի, մաղթանքի և օրհնության խոսքով հանդես է գալիս Տ. Նորվան եպիսկոպոսը:

Ընդունելությունն ավարտվում է սրբական հոր գոհաբանական աղոթքով, «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ